ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ ____20-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 12-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 12-Լ հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված հավելվածի՝

1) 3.2 ենթախումբը լրացնել նոր 563-րդ կետով.

«563. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Գյումրի քաղաքի անձնագրային խմբի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-563):»

2) 4.1 ենթախումբը լրացնել նոր 708-րդ, 709-րդ կետերով.

«708. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Գյումրի քաղաքի անձնագրային խմբի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-4.1-708):»

«709. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Գյումրի քաղաքի անձնագրային խմբի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-4.1-709):»

2. Ուժը կորցրած ճանաչել հրամանով հաստատված հավելվածի 4.1 ենթախմբի 569-րդ և 575-րդ կետերը:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին և քաղաքացիական հատուկ ծառայության ծառայողներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՂԱՋԱՐՅԱՆ**

«03» 06 2021թ.

ք. Երևան